**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.68**
**ՀԱՆ-ԳՀԾՁԲ-07/26**

15.04.26

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Վ.Չիլինգարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Ա.Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Շարժիչներով փոխադրամիջոցների ԿԱՍԿՈ տեսակի ապահովագրման ծառայություններ»-ի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով[16.1]:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[16.2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 177 500 (մեկ միլիոն հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական

միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[21.1]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1,1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/6
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**

_______________ **Վ.Չիլինգարյան**
*ստորագրություն*

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«ՍԻԼ Ինշուրանս» ԱՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արամի 3.5
ՀՎՀՀ՝ 02551341
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՀ՝ 163008157113
**Գործադիր տնօրեն**

_______________ **Ա. Մելքոնյան**
*ստորագրություն*

Կ.Տ.

Հավելված N 1
« 15 » 04 2026 թ. կնքված
N 2.68 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| չ/հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափ. միավ. | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | Մատուցման Հասցեն | Մատուցման Քան. | Մատուցման Ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 66511180/1 | Շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայություններ | | | | | | | |
| | | | • Տ/Մ մակնիշը՝ Mazda 6 025ZZ55<br>• Շարժիչի հզորությունը 143/194 ձիաուժ<br>• 2021թ.-ի արտադրության<br>Նստատեղերի քանակը 5<br>Վազքը 15942<br>Վիճակն անթերի | հատ | Ոչ ավել քան 1 177 500 | 1 | <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ք. Երևան, Ի.Գասպարյան 33 | 1 | Ծառայությունների մատուցման սկզբնաժամկետը սահմանել համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի <ը> պարբերության, ավարտը՝ 25.03.27թ.: |
| | | | Տ/Մ մակնիշը՝ NISSAN LEAF 025TT55,025PP55,025HH55<br>Շարժիչի հզորությունը 110/150 ԿՎՏ ձիաուժ<br>• 2019թ.-ի արտադրության<br>Նստատեղերի քանակը 5<br>Վազքը 6812 -71<br>Վիճակն անթերի | հատ | | 3 | | 3 | |
| | | | • Տ/Մ մակնիշը՝ Renault Captur 230AR61<br>• Շարժիչի հզորությունը 84/114 ձիաուժ<br>• 2019թ.-ի արտադրության<br>Նստատեղերի քանակը 5<br>Վազքը 30844<br>Վիճակն անթերի | հատ | | 1 | | 1 | |
| | | | • Տ/Մ մակնիշը՝ Mitsubishi L 200 268AR61, Շարժիչի հզորությունը 94/128 ձիաուժ<br>• 2019թ.-ի արտադրության<br>Նստատեղերի քանակը 5<br>Վազքը 15249,12308<br>Վիճակն անթերի | հատ | | 2 | | 1 | |
| | | | • Տ/Մ մակնիշը՝ Jac T 8 777AA47 | հատ | | 1 | | 1 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | • Շարժիչի հզորությունը 102/139 ձիաուժ<br>• 2020թ.-ի արտադրության<br>Նստատեղերի քանակը 5<br>Վազքը 28531<br>Վիճակն անթերի | | | | | | |
| | | | • Foton Tunland G7<br>• Շարժիչի հզորությունը 120/163 ձիաուժ<br>• 2024թ.-ի արտադրության<br>Նստատեղերի քանակը 5<br>Վազքը 9600<br>Վիճակն անթերի | հատ | | 1 | | 1 | |

1. Մատուցման ենթակա ծառայության յուրաքանչյուր միավորի գինը հաշվարկվում է յուրաքանչյուր ավտոմեքենայի համար գնային առաջարկ ներկայացնելու օրվա դրությամբ տվյալ ավտոմեքենաների իրենց կողմից գնահատված շուկայական գներով:
2. Գնման գործընթացում հաղթող կընտրվի այն մասնակիցը, որի առաջարկում ծառայությունների գնացուցակային գների հանրագումարը կլինի նվազագույնը:
3. Կնքվելիք պայմանագրով ծառայության մատուցման ժամկետի սկիզբ՝ ոչ պակաս 20 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Չհատուցվող գումար պետք է չլինի:

- **Չհատուցվող գումար պետք է չլինի:**
- **ԿԱՍԿՈՆ պետք է վճարի պայմանագրով նախատեսվածը նույնիսկ եթե**

1. Ճանապարհատրանսպորտային պատահարից (ՃՏՊ)
2. Անշարժ կամ շարժվող առարկաներից (կառույցներ, խոչընդոտներ, կենդանիներ, թռչուններ) վրաերթ (բախում)
3. Ավտոմեքենայի շրջումից
4. Մեքենայի վրա ինչ-որ առարկաների ընկնումից (ծառեր, ձյուն, սառույց և այլն)
5. Դիմացից ընթացող ավտոմեքենայի անիվների տակից մանրախճի, քարերի և այլ առարկաների նետում և հաջորդող վնասվածքներից եթե անգամ չգիտես ինչ մեքենայի տակից է մանրախճի, քարերի և այլ առարկաների նետում եղել
6. Մեքենայի ջրի մեջ ընկնելուց
7. Սառույցի տակ ընկնելուց
8. Տարերային աղետից, երկրաշարժից
9. Հրդեհից (այդ թվում նաև ՃՏՊ-ի արդյունքում)
10. Պայթյունից
11. Երրորդ անձանց կողմից հակաիրավական գործողություններից
12. գտնվող իրերին կամ սարքավորումներին
13. ուժեղ կարկուտը կոխկրտել է շարժիչի ծածկոցը և տանիքը
14. կայանատեղում մեքենան քերծել է ուրիշ մեքենա
15. մեքենան նկարազարդել են փողոցային խուլիգանները

16. հայելիների վնասվածքները

ԿԱՍԿՈ-ն պետք է նաև պաշտպանի գողության, կողոպուտի և ավազակության արդյունքում մեքենայի և լրացուցիչ սարքավորումների կորստի ռիսկից:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «ՍԻԼ Ինշուրանս» ԱՓԲԸ |
| ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ | ՀՀ, ք. Երևան, Արամի 3.5 |
| Ի.Գասպարյան 33 | ՀՎՀՀ 02551341 |
| Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ | Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ | ՀՀ՝ 163008157113 |
| ՀՎՀՀ 01216144 | **Գործադիր տնօրեն** |
| **Գլխավոր տնօրեն** | |
| ____________**Վ.Չիլինգարյան** | ____________**Ա. Մելքոնյան** |
| *ստորագրություն* | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Հավելված N 1.1*
*« 15 » 04 2026 թ. կնքված*
*N2.68 պայմանագրի*

# ՑՈՒՑԱԿ

## «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պատկանող և ԿԱՍԿՈ ապահովագրման ենթակա տրանսպորտային միջոցների

| N | Տ/Մ մակնիշը | Տ/Մ պետ. Համարանիշ | Տ/Մ տիպը տեսակը | Թողարկման տարեթիվ | Շարժիչի հզորությունը (ձիաուժ) | Տ/Մ ապվճարը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Mazda 6 | 02ZZ55 | Մարդատար | 2021 | 143/194 | 130 500 |
| 2 | NISSAN LEAF | 025TT55 | Մարդատար | 2019 | 110/150ԿՎՏ | 97 500 |
| 3 | NISSAN LEAF | 025HH55 | Մարդատար | 2019 | 110/150ԿՎՏ | 97 500 |
| 4 | NISSAN LEAF | 025PP55 | Մարդատար | 2019 | 110/150ԿՎՏ | 97 500 |
| 5 | RENAULT CAPTUR | 230 AR 61 | Մարդատար | 2019 | 84/114 | 75 000 |
| 6 | MITSUBISHI L 200 | 268 AR 61 | Բեռնամարդատար | 2019 | 94/128 | 157 500 |
| 7 | JAc T8 | 777AA47 | Բեռնամարդատար | 2020 | 102/139 | 187 500 |
| 8 | MITSUBISHI L 200 | 269 AR 61 | Բեռնամարդատար | 2019 | 94/128 | 157 500 |
| 9 | Foton Tunland G7 | 701DE61 | Բեռնամարդատար | 2024 | 120/163 | 177 000 |
| **Ընդամենը** | | | | | | 1 177 500 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**
________ **Վ.Չիլինգարյան**
*ստորագրություն*
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՍԻԼ Ինշուրանս» ԱՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արամի 3.5
ՀՎՀՀ 02551341
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՀ 163008157113
**Գործադիր տնօրեն**
________ **Ա. Մելքոնյան**
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
«15» 04 *2026 թ. կնքված*
N2.68 *պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | |
| | 66511180/1 | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | | Շարժիչներով փոխադրամիջոցներ ի ապահովագրման ծառայություններ | փաստացի | փաստացի | փաստացի | փաստացի | փաստացի | փաստացի | փաստացի | փաստացի | փաստացի | փաստացի | |
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2027թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | | | | | | | | Ընդամենը |
| | | | փաստացի | փաստացի | փաստացի | | | | | | | | Ոչ ավել քան 1177500 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/6
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**
________________ **Վ.Չիլինգարյան**
*ստորագրություն*
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՍԻԼ Ինշուրանս» ԱՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արամի 3.5
ՀՎՀՀ 02551341
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՀ 163008157113
**Գործադիր տնօրեն**
________________ **Ա. Մելքոնյան**
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*« 15 » 04 2026 թ. կնքված*
*N2.68 պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը __________ | գտնվելու վայրը __________ |
| հհ __________ | հհ__________ |
| հվհհ __________ | հվհհ__________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«15» 04 2026թ. կնքված
պայմանագրի
N2.68

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

Հավելված N 4
« 15 » 04 2024թ. կնքված
N 2.68 պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________-ի և ____________________-ի միջև «–» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_________________-ի միջև «–» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

09/3/1-Պ26-MR038594

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# MR038594

Երևան 2026

## ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ /ՎԿԱՅԱԳԻՐ

**# MR038594**

| 1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ | 2. ԱՊԱՀՈՎԱԴԻՐ |
|---|---|
| **«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ**<br><br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3,5<br>Հեռ. ՝ (374 60) 540000<br>Հ/հ ՝163008157113<br>Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ<br>ՀՎՀՀ՝ 02551341<br>Գրանցման վկայական ՝ 6<br>Լիցենզիա ԱՊՌ # 0004 (0033) | **«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ**<br><br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ<br>Ի.Գասպարյան 33<br>Հեռ. (37496) 03-23-23<br>Հ/Հ 247064200089, ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ<br>ՀՎՀՀ՝ 01216144 |

| | |
|---|---|
| 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ | **Ոչ կյանքի ապահովագրություն**<br>Դաս 3, ենթադաս ա), բ)<br>*Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն* |
| 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ | Սույն ապահովագրությունն իրականացվում է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 21.10.2025թ.-ին թիվ 02-Ո-25-010/06 որոշմամբ հաստատված «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության պայմանների» համաձայն (այսուհետ՝ Պայմաններ): |
| 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ / ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (այսուհետ՝ ՏՄ) | Համաձայն Պայմանագրին կից Հավելված 1-ի |
| 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՍԿԵՐ) | **6.1. Բաժին Ա՝ Ավտոտրանսպորտային միջոցների ֆիզիկական վնաս, կորուստ և հափշտակություն՝**<br>**6.1.1. ՃՏՊ (ճանապարհատրանսպորտային պատահար)** – ճանապարհով ՏՄ-ի շարժման ընթացքում կամ կանգառի վիճակում դրա մասնակցությամբ առաջացած դեպք,<br>**6.1.2. Բնական/տարերային աղետներ**–բնության ազդեցությունը ՏՄ-ի վրա (օդային զանգվածների տեղաշարժումներ, փոթորիկ, մրրիկ, կայծակի հարված, ջրհեղեղ, կարկուտ, հրաբխի ժայթքում, լեռնային փլուզում, գետնի նստվածք, սելավ, ձնահյուս),<br>**6.1.3. Կենդանիների գործողություններ** – կենդանիների պատճառով ՏՄ-ին հասցված վնաս կամ կորուստ,<br>**6.1.4. Վնասվածք՝** թռչող սարքավորումների կամ նրանց բեկորների և/կամ մասերի կամ այլ առարկաների, իրերի, շինարարական կոնստրուկցիաների հետ բախումը ՏՄ-ի հետ կամ դրանց վայր ընկնելը ՏՄ-ի վրա, ինչպես նաև ծառերի, քարերի, բեկորների, ձյան, սառույցի վայր ընկնելը ՏՄ-ի վրա, ՏՄ-ն ջրի մեջ |

ընկնելը:

**6.1.5. հրդեհ և/կամ պայթյուն-** չվերահսկվող այրում և/կամ մեծ հարվածային ուժով էներգիայի կտրուկ արագության միանվագ առաջացում, բացառությամբ Պայմանների 4.1.1.6.1 կետով նախատեսված դեպքերի,

**6.1.6. Երրորդ անձանց գործողություններ**, որն իր մեջ ներառում է՝

ա) Երրորդ անձանց կողմից թույլ տրված անօրինական գործողություններ կամ նման գործողությունների փորձ, այդ թվում՝ ֆիզիկական ուժի գործադրումով, ներառյալ՝ դրանց հետևանքով ՏՄ-ի հրկիզում, պայթեցում, վնաս և/կամ կորուստ,

բ) Երրորդ անձանց կողմից անզգուշությամբ թույլ տրված անօրինական գործողություններ:

**6.1.7. Հափշտակության ռիսկեր**, որն իր մեջ ներառում է ստորև նշված իրադարձությունների (ընդհանուր՝ հափշտակության ռիսկ) հետևանքով ՏՄ-ին պատճառված ֆիզիկական վնասը և/կամ կորուստը.

6.1.7.1. ՏՄ կամ նրա մասերի գողություն կամ դրա փորձ,
6.1.7.2. ՏՄ կամ նրա մասերի կողոպուտ կամ դրա փորձ:
6.1.7.3. Ավազակության հետևանքով ՏՄ-ին պատճառված վնաս:

**6.1.1. <u>Սույն պայմանագրով ապահովագրական պատահար են հանդիսանում և հատուցման ենթակա են նաև հետևյալ դեպքերը և/կամ վնասները, կորուստները.</u>**

- ➢ ՏՄ հայելիների, անվադողերի, անվահեցերի, անիվների դեկորատիվ ծածկերի, հաշվառման համարանիշների, ֆիրմային ցուցանշանների, արտաքին այլ տեղադրված մասերի, այդ թվում՝ սպոյլերների, մոլդինգների հափշտակությունը,
- ➢ թափքի կամ նրա առանձին մասերի երկրաչափական ձևախախտման կամ փոփոխությունների չհանգեցնող ՏՄ-ի ներկածածկի և/կամ ապակիների վնասումը, այդ թվում նաև փոքր չափի քարերի, ավազի, փոքր առարկաների, ավտոմեքենայի մաքրման/լվացման, ծառերի և/կամ թփուտների ճյուղերի ներգործության հետևանքով առաջացած վնասները,
- ➢ Եթե վթարը տեղի է ունեցել ՏՄ-ի հանդիպակաց ուղեմաս մուտք գործելու կամ ճանապարհի երթևեկելի մասի ձախ կողմից դուրս գալու արդյունքում կամ ընթացքում,
- ➢ ՏՄ-ի ցանկացած կորուստ կամ վնաս, որը տեղի է ունեցել ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 995-Ն որոշման հավելված 1-ով սահմանված հետևյալ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում՝ ՏՄ-ի վարում լուսացույցի արգելող ազդանշանի տակ, արգելված վայրում ՏՄ-ի հետադարձ, շրջադարձ կամ հետընթաց կատարում, ՏՄ-ով հոծ գծանշման հատում, ՏՄ-ի

| | |
|---|---|
| | շահագործում տվյալ ճանապարհահատվածի համար սահմանված (թույլատրված) արագությունից 30 (երեսուն) կմ/ժ-ով ավելի արագությամբ: |

| | |
|---|---|
| 7. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՎԱՐՈՐԴ | Լիազորված վարորդ է համարվում առնվազն 3 տարվա նշված կարգի ՏՄ վարելու համապատասխան վարորդական իրավունք ունեցող ցանկացած անձ, ով լիազորված է ՏՄ-ի սեփականատիրոջ կողմից վարելու ապահովագրված ՏՄ-ն |

| | |
|---|---|
| 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ | 365 օր, սկսած 10/04/2026թ.-ից մինչև 09/04/2027թ.-ը, ներառյալ նշված երկու օրը: |

| | |
|---|---|
| 9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ | ՀՀ |

| | |
|---|---|
| 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ | Յուրաքանչյուր ՏՄ համար՝ համաձայն Պայմանագրին կից Հավելված 1-ի:<br><br>**Ընդամենը 9 ՏՄ համար՝ 78,500,000 (յոթանասունութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:** |

| | |
|---|---|
| 11. ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ | **11.1.** Պայմանների 4.1.1. կետով նախատեսված ռիսկերի դեպքում՝ **Չի կիրառվում:**<br><br>**11.2.** Պայմանների 4.1.2. կետով նախատեսված ռիսկերի դեպքում ( հափշտակության ռիսկ)՝<br>վնասի/կորստի օրվա դրությամբ ՏՄ Ապահովագրական արժեքի 10%-ի չափով, սակայն ՏՄ վրա տեղադրված հակաառևանգման համակարգի առկայության դեպքում՝ վնասի/կորստի օրվա դրությամբ ՏՄ Ապահովագրական արժեքի 5%-ի չափով: |
| 12.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ | **Բաժին Ա՝** 1,5% |

| | |
|---|---|
| 13.ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ | **Բաժին Ա՝ 1,177,500 (մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ**<br>Ապահովագրավճարը պետք է վճարվի համաձայն ստորև ներկայացվող ժամանակացույցի:<br>Ապահովագրավճարը նշված ժամկետներում չվճարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի սույն վկայագիրը միակողմանի դադարեցնել: |

| 14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ | ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | |
|---|---|---|
| | **Վճարման ամսաթիվ (մինչև)** | **Վճարման ենթակա գումար** (ՀՀ դրամ) |
| | 30/05/2026 | **1,177,500** |
| | **Ընդամենը** | **1,177,500** |

| | |
|---|---|
| 15.ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ | 15.1. Պայմանների 15-րդ՝ «Ընդհանուր Բացառություններ» բաժնի 15.2.1, 15.2.3, 15.1.20 կետերը և 16-րդ «Ապահովագրական հատուցման մերժում» բաժնի 16.1.10, 16.1.11 կետը չեն գործում սույն Վկայագրի դեպքում:<br>15.2. Պայմանների 6.3 կետը չի գործում սույն Վկայագրի դեպքում:<br>15.3. Սույն պայմանագրում նշված ապահովագրական ռիսկերը հավասարապես կկիրառվեն ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցին ամրակցված Լրացուցիչ սարքավորումների նկատմամբ, եթե այդպիսիք Ապահովագրողի համաձայնությամբ նշված են Վկայագրում:<br>15.4. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և/կամ Շահառուն և/կամ Լիազորված վարորդը պարտավոր են պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին (010) 56-88-27 կամ (060) 54-00-00 հեռախոսահամարներից որևէ մեկով՝ պատահարի պահից 40 րոպեի ընթացքում, սակայն պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի մահվան դեպքում՝ պատահարի պահից 48 ժամվա ընթացքում, իսկ պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի առողջությանը վնաս պատճառված լինելու դեպքում՝ պատահարի պահից 24 ժամվա ընթացքում, ինչպես նաև անհապաղ, բայց ոչ ուշ, քան պատահարի պահից երեք ժամվա ընթացքում հայտնել համապատասխան իրավասու պետական մարմնին (կախված պատահարի բնույթից՝ ոստիկանություն, հրշեջ ծառայություն, փրկարար ծառայություն, իրավապահ մարմիններ և այլն) և պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել գրավոր հայցային դիմում:<br>15.5. Ապահովագրության վկայագրի փոփոխման, լրացման և վաղաժամկետ լուծման, ինչպես նաև ապահովագրական պատահարի արդյունքում վնասի գնահատման, հատուցման վճարման, վեճերի լուծման կարգն ու պայմանները ներկայացված են Պայմաններում: |

| | |
|---|---|
| 16.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ | 16.1. Սույն Վկայագրի և Պայմանների միջև տարընթերցումների և հակասությունների դեպքում Վկայագրի պայմանները գերակայում են: |

| | |
|---|---|
| | 16.2. Սույն Վկայագիրը կազմված է 2 օրինակից՝ հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմ ստանում է մեկ օրինակ: |

**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ**

Գործադիր տնօրեն
**Արմինե Մելքոնյան**

Ստորագրություն, կնիք

10/04/2026

**ԱՊԱՀՈՎԱԴԻՐ**

Պայմանագրին և Պայմաններին ծանոթացել եմ և համաձայն եմ: Ստացա դրանց մեկական օրինակ:/
Սույնով հավաստում եմ,որ իմ կողմից ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ-ին հայտնած բոլոր տեղեկությունները համարվում են հավաստի և արժանահավատ Նախազգուշացված եմ, որ ապահովագրական ընկերությանը ոչ հավաստի կամ անարժանահավատ, ինչպես նաև կեղծ, իրականությունը խեղաթյուրող տեղեկություններ ներկայացնելու դեպքում, օրենքով նախատեսված կարգով, կարող եմ ենթարկվել քրեական պատասխանատվության
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ, որ ծանոթացել եմ https://www.silinsurance.am/processing-of-personal-data.html հղումով տեղադրված Ընկերության «Անձնական տվյալների մշակման» քաղաքականությանը և ամբողջությամբ համաձայն եմ դրանում նշվածի հետ:
Սույն Վկայագրի կնքմամբ՝ ՏԱԼԻՍ ԵՄ ԻՄ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ Ընկերությանը մշակել իմ տրամադրած անձնական տվյալները՝ ապահովագրական ծառայությունների պատշաճ մատուցման ապահովման և Ընկերության «Անձնական տվյալների մշակման» քաղաքականությամբ սահմանված այլ նպատակներով:

Գլխավոր տնօրեն
**Վ.Չիլինգարյան**

Ստորագրություն, կնիք

10/04/2026

*Հավելված 1*

## Ապահովագրված տրանսպորտային միջոցների ցանկ

| | Տրանսպորտային միջոցի մակնիշ, մոդել, հաշվառման համարանիշ, VIN համար, Արտադրության տարեթիվ / | | | | Ապահովագրական արժեք/ Ապահովագրական գումար /ՀՀ դրամ | Ապահովագրության սակագին % | Ընդամենը տարեկան ապահովագրավճար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | MAZDA 6 | 025ZZ55 | JMZGJ523801803117 | 2021 | 8,700,000 | 1,5 | 130,500 |
| 2. | NISSAN LEAF | 025TT55 | 1N4AZ1CP0KC315820 | 2019 | 6,500,000 | 1,5 | 97,500 |
| 3. | NISSAN LEAF | 025HH55 | 1N4AZ1CP6KC316390 | 2019 | 6,500,000 | 1,5 | 97,500 |
| 4. | NISSAN LEAF | 025PP55 | 1N4AZ1CP7KC315684 | 2019 | 6,500,000 | 1,5 | 97,500 |
| 5. | RENAULT CAPTUR | 230AR61 | X7LASREA763360483 | 2019 | 5,000,000 | 1,5 | 75,000 |
| 6. | MITSUBISHI L 200 | 268AR61 | MMBMG45H5KH038874 | 2019 | 10,500,000 | 1,5 | 157,500 |
| 7. | JAC T8 | 777AA47 | LJ11PABD8LC026706 | 2020 | 12,500,000 | 1,5 | 187,500 |
| 8. | MITSUBISHI L 200 | 269AR61 | MMBMG45H5KH038860 | 2019 | 10,500,000 | 1,5 | 157,500 |
| 9. | Foton Tunland G7 | 701DE61 | LVAV2MAB7RU034019 | 2024 | 11,800,000 | 1,5 | 177,000 |
| **Ընդամենը՝** | | | | | **78,500,000** | | **1,177,500** |

| ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ/ INSURER | ԱՊԱՀՈՎԱԴԻՐ/ INSURED |
|---|---|
| Գործադիր տնօրեն<br>**Արմինե Մելքոնյան** | Գլխավոր տնօրեն<br>**Վ.Չիլինգարյան** |
| Ստորագրություն, կնիք | Ստորագրություն, կնիք |
| 10/04/2026 | 10/04/2026 |